



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՄԻԱՅԻ ԽՈՐ Ա. ՏԻ; Լ. Ե Ս. 56

\* \* \*

«Ով որ վէրք ունի  
Նա էլ երգ ունի».

— — —

31.99  
n - 83

Թիֆլիս 1904 թ. .

Տպարան „ՀԵՐՄԻԿԱ“ Մի. փողոց № 81

85  
75

6 NOV 2011

891.99

7-83

ԿԱ

\* \* \*

88-1  
182

1001  
14269

«Ով որ վերք ունի  
Նա էլ երգ ունի».



թիվ 192 1904

Տպագործական և բարեկամական աշխատանքների գործադրությունը Մինասյան, փող. 81.

29 APR 2013

33709



\* \* \*

Թրքուած սլրախս խոր վէրքեթիցն եմ  
ես իմ սրտառուչ երգերը հիւսել.  
Զարդւած քնարիս բեկ լարերիցն եմ  
կայծել իմ խորքը՝ սգածայն հնչել:

Օ՛, դու մի ծաղրիր իմ մաղձոտ երգեր,  
իմ փշուր լարեր—ես մեղաւոր չեմ.  
Ծընւել եմ այսպէս, տանջւել անընկեր,  
ես նեղ օրերի նեղսիրտ երգիչ եմ:

Ես տոգորւած եմ, տանջանքի բովում,  
Հըրակէզ մտքի բարձր թըոիչքով.  
Ես տառապում եմ, վշտի երկունքում,  
իմ խոր վէրքերի բուռն յուզմունքով:

Ծաղրւած իդէալ, ցաւով համակւած,  
ես թոյն եմ ժայթքում, արցունքի նեղեղ.  
Ներիր, հիւանդ եմ, անսահման յոզնան,  
ես մըրմընջում եմ, տանջւած իմ ուղեղ:

Дозволено цензурою, 7 Окт. 1903, Тифлисъ.

\* \* \*

Ա՞խ, գու ովկ ես, օ, լուռ ողի՛,  
Որ ամեն ժամ անձկալի,  
Միշտ իմ սրտում մըտորմունքի  
Զերմ ես վառում թախծալի:

Ա՞խ, ինձանից մի պահանջէք  
Ուրախ տաղեր երգելու . . .  
Ես հիւանդ եմ, հանգիստ տըւէք,  
Ես սիրո չունեմ հըրճելու . . .

Տիսներ, լալուկ են իմ երգեր,  
Ես չեմ երգում գեղ գարուն.  
Խաւար, մըթին են իմ մըտքեր,  
Իմ հոգին է ծեր աշուն:

Որ մըտախոհ մերթ լացում ես  
Խաչիս առաջ գըլխակոր,  
Եւ իմ ճակատ հուր՝ թացում ես,  
Ինձ հետ վշտում սրտկոտոր:

Որ շողում ես մերթ իմ հոգում  
Տիսուր, շըւմը վիճակով,  
Համբոյրդ ցաւ—սիրո կըակում  
Միրոյ, վշտի տանջանքով.

Ա՞խ, գու ովկ ես, օ, լուռ ողի՛,  
Որ ամեն ժամ անձկալի՝  
Մաշում ես ինձ կեանքի երգի  
Կարօտովլը թախծալի:

\* \* \*

Մի կաթիլ արցունք փոխ տնւր ինձ, ընկեր,  
Ես լալ եմ ուզում.

Վիշտը պատում է իմ սիրտ կարեվէր,  
Սգալ եմ ուզում:

Մարդիկ ինձանից երես են դարձրել,  
Չունեմ միսիթար.  
Իմ հոգուն ծանր թախիծ է պատել,  
Տանջում չարաչար:

Ա՛յս, այսպէս կրծքիս կեանքը ծանրացաւ,  
Բեռն զգալի.  
Յուղեց փոթորիկ—իմ ոյժը հատաւ,  
Հանգիստ թունալի:

Եւ այս դառնութեան տագնապի ժամին  
Հոգի առնելու՝  
Մի կաթիլ արցունք, ընկեր իմ անդին,  
Փոխ տնւր լացելու:

\* \* \*

Ո՞, ես մահը երազել եմ,  
Երազել եմ կարօտով.  
Ես լացել եմ, առգորել եմ,  
Գայ թևն առնէ ինձ շուտով:

Ես իմ միաքը թըսցըել եմ  
Մահու հրեշտակ կանչելու.  
Արցունքն աչքիս ըսպասել եմ,  
Որ անկար եմ տանջելու:

Է՛լ իմ բորբոք յոյզեր չըկան,  
Ես ապրում եմ յուսակտուր.  
Որ կրում եմ անարդ շղթան՝  
Կեանքում մենակ ու տխուր:

## Ընկերին

Եւ դու տխրհւմ ես, ընկեր, դեռ մանուկ  
Ծեր ենք լիովին, թոյլ, անօգնական,  
Որ այս մեր կեանքում լեղին ու անձուկ  
Շատ ենք երազել, տանջւել բաւական,  
Որ իգուր տեղը ուղեղ ենք մաշել,  
Մենք տառապել ենք լաց ու կոկիծով.  
Վիրաւոր սրտով շնտ ենք մորմոքւել,  
Չարժէ այլ երս ապրել յուսալով՝  
Այս ծանր օրին, երբ որ լըքած ենք,  
Մեր սրտեր խոցւած—փուշ ու արմալի,  
Ա՛խ, երբ մի կաթիլ արտօսր չունենք  
Ողբանք մեր զլուխ, մեր կեանք վշտալի։

Ենչու, գառնացած, ծեր ենք, ասում ես,  
Թոյլ, անօգնական, երբ դեռ ոյժ ունենք.  
Ի՞նչ անենք, որ մենք, ինքդ էլ գիտես,  
Դեռ երս մանուկ ծովի նաւորդ ենք.  
Ի՞նչ անենք, որ մենք յարածուի ծովում

Ալիքների դէմ կըուի ենք մտել,  
Տառապած սրտով այդ ծանր կուռւմ  
Շատ ենք մենք լացել, շատ ենք երազել.  
Օ՛, չէ դեռ յուսով կարող ենք ապրել,  
Մենք լոկ լքած ենք, բայց ոչ թէ խարւած.  
Օ՛, չէ տակաւին կարող ենք կռւել,—  
Ա՛խ, զուր ես տխրում, ընկեր իմ սիրւած։

Ջանիլ գարունքիւն  
Ես վիշտ եմ կրել, անյոյս տառապել,  
Երկունքի բովում սև մտածմունքիս . . .  
Ա՛յս, ես չեմ ապրել՝  
Լոկ զառանցել եմ, անվերջ տանջանքիս,  
Մենաւոր կեանքիս . . .

\* \* \*

Ես արտասւել եմ՝  
Այնքան ջերմաջերմ մուժ գիշերները,  
Որ բուռն վշտից ես բռնկւել եմ . . .  
Ա՛յս, յուզումները՝  
Ինձ ցաւ են նիւթել—և ես տանջւել եմ,  
Լուռ մորմոքւել եմ . . .

Արցունքից խեղդւած՝  
Ամուր գրկել եմ ես իմ ծկերը  
Անլուր հեծեծել—սէրտս խոցոտւած . . .  
Ա՛յս, իմ վէրքերը՝  
Ինձ տոչորել են—իմ հանգիստ խախտւած,  
Իմ պսակ ջարդւած . . .

\* \* \*

\* \* \*

Ի՞նչի՞ են պէտք խաւար մըտքեր,  
Երբ չեն պարզուամ, եկը չունեն.  
Տաղտուկ կեանքի մոլի կըրքեր,  
Երբ յագեցում, վերջ չունեն:

Ի՞նչի՞ են պէտք պար ու երգեր,  
Չընաղ կոյսի սէր բորբոք.  
Երբ սիրտ անձուկ, լըքած յոյսեր,  
Երբ մարդ չունի օր իրօք:

Ա՛յս, ես չեմ սիրել. բայց սիրոյ խանդով  
Ինձ պէս ոչ մէկը չի լինիլ տանջւած.  
Բուռըն տենչանքի անհուն կարօտով

Ո՛ւհ, սիրտ չի ճմլած,  
Թէկուզ չեմ սիրել: Իմ ցաւած սրտում,  
Թողլ ինձ, ընկերս, սէր մի որոնիր.  
Այս դժոխք կուրծքը չի շնչած ինդում,  
Զուր մի մորմոքիր,

Ես չեմ սիրելու: Թողլ սէրը լըռէ  
Այս ծանր օրին, երբ յոյս մարեց.  
Թողլ իմ վէրքերից կաթ-կաթ թոյն ծորէ,  
Երբ բախտն ծաղրեց՝  
Ես չեմ սիրելու... Ու սիրոյ խանդով  
Թէկուզ ոչ մէկը ինձ պէս չի տանջւած,  
Թէկուզ համբոյրի բուռըն կարօտով՝  
Ո՛ւհ, սիրտ չի ճմլած:

Ես մի պանդուխտ եմ, մի հիւր եմ այստեղ,  
Այս խաւար կեանքում լալական ողի.  
Ա՛խ, մի հարցնիր իմ օրից սրտնեղ,  
Իմ սիրուց գժգոյն, ցաւը մորմոքի.

Թռղ լնձ կարեվէր,  
Քոյրիկ, անընկեր:

\*  
\*

Այս իմ արհսաթու սրտի խորքերից  
Դու մի հարցնիր, քոյրիկ, կ'արտառեմ.  
Թող լուռ կակծամ խորունկ վէրքերից,  
Բայց միայն երբէք ես չը դարդուաւեմ՝  
Քան լուցկին կայծած,  
Բոնկւեմ յանկարծ:

Թող ծանր վիշտը ճնշէ իմ հոգուն,  
Թախծեմ ողջ օրը ու մենակ շրջեմ՝  
Երբ զիշեր լինի սրտկոսոր, անքուն  
Մի խուլ անկիւնում թագուն հառաչեմ՝  
Իմ սէրը—վշտոր,  
Իմ հոգին—տխուր:

\*  
\* \*

Մի սիրտ ունեմ կարեվէր,  
Ժայռն եմ գնում անընկեր,  
Այնտեղ սիրտո բաց անեմ,  
Ես ինձ մենակ արտասւեմ:

Մի սիրտ ունեմ կարեվէր,  
Ժայռն եմ գնում անընկեր,  
Ճակտիս ամպը թանձրանայ,  
Գարուն կեանքս սևանայ:

Մի սիրտ ունեմ կարեվէր,  
Ժայռն եմ գնում անընկեր.  
Ժայռը լոփի ու խոժոս,  
Ես էլ յողնած ու անզօր:

\*\*\*

Ցուրտ է դուրսը՝ գոն փոթորիկ,  
Անապատի հողմն է ոռնում.  
Կըտոր, կըտոր իմ խեղճ սրտիկ  
Կրծքիս խորքումն է հեռում:

Խորին ձմեռ—սառնամանիք,  
Սարսուռ կը զգամ յարաժամ.  
Անտուն, անտէր չունեմ մայրիկ՝  
Գիրկը հանգչեմ տաքանամ:

Ուփ, ես հիւանդ՝ ծերուկ աշուն,  
Սիրտս շիրիմ սև, լոփի.  
Լաց ու մորմնք քաշեմ անքուն,  
Ա՛խ, ինչո՞ւ եմ անմայրիկ:



\* \*

Ա՛խ, աննշան երկրի մի խորշ, մի անկիւն  
 Այս նոր տարբեն ցուըտ ու բքից պահւելու,  
 Ճաւ, յուզմունքից իմ տառապած հէդ հոգուն՝  
 Օ՛, մարդասէր, աղերսում եմ զիջելու . . .  
 Աղերսում եմ . . . արցունք աչքիս սրտկուսոր,  
 Որպէս աղքատ՝ մի փշունք—չոր կտոր:

Խորին գիշեր է.  
 Հաղմար աչքանի  
 Աստղոտ գիշեր.  
 Մօտիկ անտառը,  
 Մեղմ սոսափիւնով,  
 Հեծում է տխուր.  
 Կաթնածիր լուսին,  
 Մանուկ օրերիս,  
 Հողում է շողուն  
 Ծով-ձիւն ամպերում.  
 Եւ հսկայ լեռը  
 Ստեր է գցել  
 Գերեզմանների՝  
 Անխօս խաչերին,  
 Դժգնյն քարերին,  
 Իսկ ես այդ ժամին,

Շուրջս լուռ, անձայն  
կանգնած եմ մենակ,  
Մենակ, յուսախար.  
Խորտակւած հոգւով,  
Վիրաւոր որտով,  
Քո հողակոյտին,  
Օ՛, մայր իմ անդին.—  
Ու լաց եմ չափում,  
Քո հողն եմ թացում:  
  
Քո անբաղդ որդիդ,  
Տարագիր որդիդ,  
Հեռաւոր տեղից—  
Քեզ այց եմ եկել.  
Ա՛խ, ծերացել եմ,  
Ես էլ ոյժ չունեմ,  
Աշխարհում անձար՝  
Ես թափառում եմ,  
Ես տառապում եմ...  
Քեզ այց եմ եկել.  
Տեղ տնւր, մայրիկ ջան,  
Քո ծոցում պառկեմ

Ու հանգստանամ,  
Որից կեանք առայ.  
Ես էլ ոյժ չունեմ,  
Ծանր խաչի տակ,  
Անմիտ կռւի մէջ,  
Յոգնել եմ իսպառ.  
Տեղ տնւր, մայրիկ ջան,  
Օ՛, տեղ տնւր ծոցիդ՝  
Համբոյըով անոյշ,  
Երգով կաթողին,  
Վառ երազ լինեմ.  
Աշխարհից հեռու,  
Ցաւերից հեռու...

\*  
\*

Տիսուր մահու մելամաղձիկ  
Ես կոչնակն եմ կը զնդամ.

Տրտում սրտի մենաւորիկ՝  
Ես կոչնակն եմ կը զնդամ:

Ես վիշտ ունեմ—անյուսութիւն,  
Անյոյս մանրը ցաւեցաւ.

Ես սուր ունեմ—իմ մանկութիւն՝  
Ա՛խ, արցունքով սև անցաւ:

\*  
\*

Թռղ իմ աչերը յորդ աղբիւր լինին,  
Արցունքնտ աղբիւր ու քամւի, քամւի...  
Թռղ գալ տարիքս չնը տերեւ լինին  
Աշունքնտ տերեւ ու թափւի, թափւի...

Ա՛խ, մի և նոյն է, թռղ աշուն լինի,  
Մի անդամ լինի քամի ու գիշեր.  
Իմ վշտոտ սրտին թռղ մի խորշ լինի,  
Մի անդամ լինի սև, դաժան ձմեռ:

\* \* \*

Քամին է շաչում, խեղճի հետ լացում,  
Խօլական քամին փողոցի միջին.

Հարուստի գուռը քամին է ծեծում,  
Տարապահ ժամին արցունքը աչին:

Քամին է խօսում, ցաւից է խօսում,  
Աշխարհի ցաւը—ձըմրան բուքը.  
Թշւառի բախտը շրջում է դրսում,  
Քամու հառաչը—տնանկի սուզը:

Քամին է շաչում, անյոյս շառաչում,  
Օդի մէջ պտըտում հոգու մրմունջներ.  
Երկրի ամեն կողմ կոծելու փախչում,  
Ամեն տեղ լցնում խուլ հեծեծումներ:

\* \* \*

Ցոլացէք աչեր վերջին խաւարման՝  
Կնճռնտ դէմքիս.

Ցոլացէք յոյսեր վերջին անջատման  
Հիւանդատ կւանքիս.

Ե'կ աշխոյժ, աւիւն—աղբիւլ կենսական—  
Գեռ լամ, արտնջան.  
Ե'կ խնդում, ծիծաղ—կոյսի տուրեկան—  
Սիրեմ, մրմնջամ . . .

\* \* \*

**Նույն Ե. Բ.**

(Ժողովրդ. մօսին.)

Ծովը յուզող փըրփուր-փըրփուր  
 Ալիք կուզեմ ես ըլլամ.  
 Գնամ ու գամ կըտուր-կըտուր  
 Քարափ զարնւեմ ու յար լամ:

Մատաղ կուսի մարմար լանջին  
 Վըզնոց կուզեմ ես ըլլամ.  
 Նշխուն աչեր ինձ միշտ նային,  
 Սիբար զարկող համբոյր տամ:

Ես ալիքն եմ փըշուր-կըտուր  
 Կուզեմ յուզում, որ միշտ լամ.  
 Սաթ վըզնոցն եմ, աղջի՛, կախ տուր,  
 Պաչ տներ, Շուշան, պըլսլլամ:

\* \*

Սիրոյ յժէշը արցունը խլեց  
 Վառ ու գոհար կաթիլներ.  
 Հանդած յոյսը լուսաւորեց  
 Իմ մենաւոր սև օրեր:

Եւ ահա, ես նոր սիրտ առած  
 Կեանք, սիրել եմ քեզ ուխտում.  
 Իդէալով ոգեորւած  
 Ապրել ուզում, սէր երգում:

ԲԱԼԵՐԻԱ

Ես երգեցի ծովի ափին՝  
Տխուր երգեր տոչորւած.  
Միրոյ յուշեր գալնան արփին,  
Կեանքի յոյսեր փըշըրւած:

Վիհ, անյատակ ծովը յուզւեց,  
Որպէս սիրտը մատաղի.  
Լալուկ ալքը խորը սուզւեց,  
Փրփուր ժայթքեց կատաղի.

Ահա նշխեց ալ-ծիածան.  
Ե՛կ, ընկերըս, եկ պարզենք  
Մեր մակոյկը ծովում ծածան,  
Կեանք-փոթորիկ երազենք:

(Թօգէնիէլիցից)

Երբ կը վերջանայ դառն աշխատանքի  
Քրանաթոր օրը խուլ չարչարանքի,  
Անվաս չարի, բարիկ անճար,  
Եւ լոկ կը տիրէ ինձ խոր զգացումն  
Յոգնած անբանի տանջւած չարաչար,  
Երբ էլ միտք չ'լինի իմ ձնշւած հոգում,  
Եւ գլշեր կը գայ, օ, ինչպէս այնժամ  
Ես կ'ուրախանամ, որ ննջեմ, մոռնամ:

Եւ դաժան բաղդով նեղութիւնների  
Այս կեանքը կ'անցնի անարդ օրերի.  
Կեանքն անմիթար, դժգո՞յն ու խոռվ,  
Իր յամառ կռւով, իր իզուր կռւով,  
Անշող իմ սրտին, անօգուտ մարդկան,  
Անզօր կանգնելու բարիի պաշտպան.  
Եւ մահը կը գայ—կը հրձեմ ես էլ,  
Որ կը մոռանամ իմ անոյժ լինել:

\* \*

Ա՛խ, ինձ մի կանչիր, մուսա, ներշնչման  
Գալրնան, նոր վշտի տապովվը խոկման—  
Կասկածը վէրքով,  
Կարօտը երգով.

Սիրտս մի նշխիր շողողուն յուշեր,  
Միտքս մի ներկիր թըսթըսուն շողեր.  
Բաղձանքը անհուն,  
Իր ճակը հոսուն:

Մի բաց կապոյտը տիխամած հովտին  
Իմ զլիի վերև, իմ դժգոյն ճակտին.  
Որ առաօտուն,

Անցած օրերուն,  
Արեածագի ծովժպտուն ալիք

Առնէ իմ հոգին վսեմ ցնորքով.

Բնութեան գրկում, մշուշ իմ դալիք,  
Շւարեմ լեռան իր ճամբան ամպով:

\*

Երկինք պսպղուն,  
Սիրտս երազուն՝

Յափշտակւելու լուսնակ գիշերին  
Իջնեմ հովիտը յուշիկ ու լըսին:

«Ա՛խ, անոյշ գարուն,  
Ա՛խ, աստղեր վառուն».

Յիշեմ իմ օրօր լամ ու հառաչեմ,  
Ուրիշ աշխարհներ սիրելու թռչեմ:

Թող իմ սրտի մէջ,  
Մութ լինի անվերջ:

Ծովի աւազում անդեկ ու անթե,  
Իմ նաւեր փշուր մնան խաչածե:

Ա՛խ, ինձ մի կանչիր, մուսա, ներ կեանքի,  
Նոր բախտի տապով զուր երազանքի.

Կասկածը վէրքով,  
Կարօտը երգով:

\* \* \*

Դժգոյն՝ փոշուն մէջ, լըսին՝ քօղին տակ  
Ում սրտիկն ես, լար, ում կեանքն ես, քնար  
Հծծիւնը՝ խորհւնկ, ծաղրը՝ յիշատակ,  
Ում հոգին ես, լար, ում միտքն ես, քնար

Ո՞վ է թըսթոռն քո լարը շարժել,  
Մատերը մոմի, դողդոջ ու լալուկ.  
Քեզ հետ միասին նըւաղ հառաչել՝  
Անուրջին մէջը ճակատը դալուկ.

Ո՞ւր են այժմ այն աչերը մուզ-ձով,  
Խաղաղութիւնը, երբեմի կրակ,  
Որ տանջւած ունի սկ օրւան լացով.  
Ցնորք իր սէրը, բախտը դժնդակ:

Դժգոյն՝ փոշուն մէջ, լըսին՝ քօղին տակ,  
Ում հոգին ես, լար, ում միտքն ես, քնար  
Հծծիւնը՝ խորհւնկ, ծաղրը՝ յիշատակ,  
Ում սրտիկն ես, լար, ում կեանքն ես, քնար



ՀՀ Աղքային գրադարան



NL0335928

33109

15 q.